Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-952[1]-21.07.2010-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (2003 թվականի ապրիլի 18-ի ՀՕ-528-Ն) (այսուհետ՝ Օրենսգիրք) 208-րդ հոդվածը՝

1. լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1 մասով՝

«2.1. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է պատասխանատու անձի կողմից՝ պատժվում է տուգանքով նվազագույն աշխատավարձի հազարապատիկից երեքհազարապատիկի չափով կամ ազատազրկմամբ առավելագույնը հինգ տարի ժամկետով:»:

2. լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով՝

«4. Սույն օրենսգրքի 208, 209, 210 և 211 հոդվածներով նախատեսված պատասխանատու անձ է համարվում օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ տնտեսվարող սուբյեկտի գործունեության ղեկավարման կամ կազմակերպման լիազորություն ունեցող անձը, որը ենթակա է քրեական պատասխանատվության նշված հոդվածներով նախատեսված արարքների կատարման համար՝ անկախ խախտման սահմանային չափից:»:

Հոդված 2. Օրենսգրքի 209-րդ հոդվածում՝

1. 1-ին մասի՝

1) «հինգ հարյուրից մինչև հազար» բառերը փոխարինել «հիսունից մինչև հինգ հարյուր» բառերով.

2) 2-րդ մասի «հազար» բառը փոխարինել «հինգ հարյուր» բառերով.

3) 3-րդ մասի «երկու հարյուր» բառերը փոխարինել «հիսուն» բառով և «դրամ» բառից հետո լրացնել «բացառությամբ պատասխանատու անձի կողմից կատարման դեպքերի»:

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 5-րդ մասով՝

«5. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ կամ երրորդ կամ չորրորդ մասերով նախատեսված արարքները, որոնք կատարվել են պատասխանատու անձի կողմից՝

պատժվում է տուգանքով նվազագույն աշխատավարձի երեքհազարապատիկի չափով կամ ազատազրկմամբ առավելագույնը երեք տարի ժամկետով:»:

Հոդված 3. Օրենսգրքի 210-րդ հոդվածում՝

1. 1-ին մասի «երկու հարյուր» բառերը փոխարինել «հիսուն» բառով:

2. լրացնել հետևյալ բովադակությամբ նոր 3-րդ մասով՝

«3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասերով նախատեսված արարքները, որոնք կատարվել են պատասխանատու անձի կողմից՝

պատժվում է տուգանքով նվազագույն աշխատավարձի երեքհազարապատիկի չափով:»:

Հոդված 4. Օրենսգրքի 211-րդ հոդվածում՝

1. 1-ին մասը «դրոշմանիշերով դրոշմավորված» բառերից հետո լրացնել «կամ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված՝ իրացման համար թույլատրելի

ժամկետներից հետո որոշակի թվագրումով դրոշմանիշերով դրոշմավորված» բառերով և «երկու հարյուր» բառերը փոխարինել «հիսուն» բառով:

2. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3-րդ մասով՝

«3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասերով նախատեսված արարքները, որոնք կատարվել են պատասխանատու անձի կողմից՝

պատժվում է տուգանքով նվազագույն աշխատավարձի երեքհազարապատիկի չափով:»:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2011 թվականի ապրիլի 1-ից:

ԱՓՈՓԱԹԵՐԹ

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ԱԺ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Առաջարկության, առարկության հեղինակը (առաջարկության, առարկության ստացման ամսաթիվը)	Առաջարկության, առարկության բովանդակությունը	Եզրակացություն
ՀՀ կառավարություն	Համապատասխանեցնել ուժի մեջ մտնելու ժամկետը:	Ընդունվել է: Նախագծի ուժի մեջ մտնելու ժամկետը նախատեսվել է 2011 թվականի ապրիլի 1-ը, քանի որ 2010 թվականի ՀՕ-148-Ն օրենքը, որը կարգավորում է միևնույն հարաբերությունները, ուժի մեջ է մտնում 2011 թվականի մարտի 1-ից, ինչի հետ կապված՝ նախագծով նախատեսված փոփոխությունները և լրացումները կշարադրվեն նախկին խմբագրությամբ